

ԱԿՈՍ

10 1 1 1 6 3 • 1 2 17 Ա Յ Ի Ո 1 9 9 9



Ծրահամար

ԵՐՈՒԱՆԳ ԿՈՊԵԼԵԱՆ

Յարգանք Բարի Հսկայից...

Գ ունագեղ ու կենսունակ օրեր կ'ապրի Իսթանպուլահայութիւնը՝ այլազան մշակութային, գեղարուեստական եւ ընկերային շարժումներու տեսակէտով, ինչպէս մեր Համայնքին մասնաշատկութիւններէն մէկը եղած է ամէն գարունի եւ յատկապէս գիւղագնացութեան նախօրեակին, հրապարակի վրայ ալ սովորութիւն դարձած եղանակովերջի գեղջ-վաճառքներուն հետ, կարծէք գեղեցիկ դուզադիպութեամբ մը՝ իրարու ամբողջացուցիչը դառնալով:

Այս գունագեղ ու բազմապիսի ելոյթներուն ու շարժումներուն վրայ, անխուսափելի սիրուն ու հաճելի անակնկալներն ալ անպակաս կ'ըլլան յաճախ, ա'լ աւելի «շուտրուն» վիճակի մը մատնելու համար Իսթանպուլահայը, որ այդ բոլորին դիմաց կարծէք նոր յուզում, նոր կեանք ու նոր խանդավառութիւն կը ստանայ, արդէն իսկ բոլորին ծանօթ իր աւանդական կենսունակութեամբ: Բայց ան գոհ է ու երջանիկ իր շուրջ ստեղծուած այս «իրարանցում»էն, որուն մասամբ ալ ի'նքն է ստեղծիչը կամաւոր կերպով, քանի որ նաեւ կը սիրէ ամէն առթիւ «գործ բանալ գլխուն» եւ գիտէ միշտ ամենէն գեղեցիկ եւ արդիւնաւոր կերպով պսակել զայն, ինչպէս կը հաստատեն արտասահմանէն այցելողներն ալ ու կը բաժնուին գնահատական խօսքերով եւ սքանչացման արտայայտութիւններով:

Այս անգամ, երբ սրահներն ու բնմերը անբաւարար եկան զանազան գեղարուեստական ելոյթներուն ու ձեռնարկներուն համար, ունեցանք բացառիկ առիթ մըն ալ մեր մէջ ողջունելու իւրայատուկ դէմք մը. Ֆրէզնոյի անուանի լուսանկարիչ արուեստագէտներէն Տիար Փոլ Գալինեանը՝ իր շնորհալի Տիկնոջ հետ: Ան Իսթանպուլ կու գար մեզի ցուցադրելու համար գեղեցիկ վաւերագրականը աշխարհահռչակ գրագէտ Պիթլիսցի Ուիլիլմ Սարոյեանի մասին, որ նոր երանգ մը կը բերէ Իսթանպուլահայութեան գեղարուեստական կեանքին:

Սարոյեան, մասնաւորաբար 50-ական եւ 60-ական տարիներուն, գրեթէ անբաժան հիւրը եղած էր Հայաստանի, ուր շրջապատուած էր մեծ յարգանքով ու գուրգուրանքով՝ բոլոր շրջանակներուն կողմէ: Յատկապէս «Հայրենիքի Զայն» շաբաթաթերթին մէջ ան գրեթէ տարիներ ամբողջ ունեցաւ իր պատուոյ տեղը եւ դարձաւ Հայ Ժողովուրդին առասպելական «Բարի Հսկան» ու բոլորին արժանաւոր սիրելին Հաւասարապէս՝ իբրեւ Հարազատ Պիթլիսցի, Ֆրէզնոցի եւ Հայաստանցի...:

Շատ տեղին ու դիպուկ բնութագրում մըն է Փոլ Գալինեանի կողմէ պատրաստուած Սարոյեանական վաւերագրայինին տիտղոսը. «Ուիլիլմ Սարոյեան. Մարդը, Գրողը»: Արդարեւ, այս Բարի Հսկան իր մէջ հաւասարապէս կը մարմնաւորէր թէ՛ իրաւ Մարդը եւ թէ՛ աշխարհահռչակ Գրողը: Չուրջէր որ աշխարհի երկու գեր-պետութիւնները բազմաթիւ միջազգային եւ Համաշխարհային հարցերէ առաջ՝ Համաձայնած էին անոր համամարդկային գաղափարներուն մասին եւ համատեղ գրոշմաթուղթ շրջաբերութեան դրած, իբրեւ առաջին շաղախը ճշմարիտ խաղաղութեան:

Տասնեակ տարիներ առաջ, երբ կը հրատարակուէր Ուիլիլմ Սարոյեանի «Անունս Արամ է» վէպին Թրքերէն թարգմանութիւնը, խորապէս իմաստալից վերլուծում մը լոյս տեսած էր տեղական թերթի մը մէջ՝ Հեղինակին մասին. «Սարոյեանի այս գործը մասնաւոր նիւթ մը չունի. նոյնիսկ կարելի է պատմել քանի մը նախադասութեամբ. «Ճամբան թափուած նոր ասֆալթին վրայ, տղեկ մը փայտի կտորով մը կը դրէ. «Իմ անունս Արամ է»: Ա'յդքան: Բայց եթէ մէկը կը կարգայ այդ տողերը եւ աչքերէն արցունք չի հոսիր, կա'մ այն է որ արցունք չունի եւ կամ ալ տրոփող սիրտ մը՝ կուրծքին տակ»:

Մեր կարծիքով, այս քանի մը տողերն ալ բաւարար են ամենէն ճշգրիտ կերպով ծանօթացնելու Մարդ-Գրողը, Պիթլիսցի Բարի Հսկան, որ կը կոչուի Ուիլիլմ Սարոյեան...:

gobelyan@performans.net.tr